Փաստ. անվանումը	Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտորի ընտրության ընթացակարգ
Փաստ. N	ԵՄՀ/ՐԿ-ԿԳ-03-01
Հաստատման ամսաթիվը	03/11/ 2009
Արձանագրության N	4/09
Հաստատող մարմինը	Հիմնադիրների խորհուրդ , Սուրեն Օհանյան
Մշակող	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին
Ներդրման/իրականացման պատասխանատու	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին

Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
06 փետրվարի 2018	Կատարվել է ոչ հիմնարար փոփոխություն, ավելացվել է առաջին էջը՝ կոդավորման, ներդրման պատասխանատվությունը հստակեցնելու և հետագայում փոփոխությունները կառավարելու նպատակով:	Սուրեն Օհանյան Ռեկտոր

Հաստատում եմ
ԵՎՐԱՍԻԱ միջազգային համալսարանի
Հիմնադիրների խորհրդի նախագահ,
պրոֆեսոր՝ Ս.Օհանյան
«3» նոյեմբերի 2009թ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1. Համալսարանի ընթացիկ ղեկավարումն իր իրավասության սահմաններում իրականացնում է գործադիր մարմինը՝ համալսարանի ռեկտորը:

1.2. Համալսարանի ռեկտորը՝

ա) կանոնակարգում և ղեկավարում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը,

բ) ներկայացնում է համալսարանը Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական մարմիններում, կազմակերպություններում, հիմնարկներում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում, տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,

գ) ապահովում է ըստ մասնագիտությունների մասնագետների պատրաստման և գիտահետազոտական աշխատանքների պատվերների կատարումը,

դ) կնքում է պայմանագրեր, բանկերում բացում է հաշիվներ,

ե) սահմանում է համալսարանի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

զ) կնքում է աշխատանքային պայմանագրեր սահմանված կարգով ընտրված դեկանների, ամբիոնի վարիչների և դասախոսների հետ: Պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, սահմանում է նրանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության շրջանակները,

է) սահմանված կարգով կարգապահական ներգործության միջոցներ է կիրառում աշխատողների և սովորողների նկատմամբ,

ը) հրամաններ է արձակում ուսանողների ընդունելության, կուրսից կուրս փոխադրելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու և որակավորման աստիճան շնորհելու մասին,

թ) պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում համալսարանի պրոռեկտորներին՝ սահմանելով նրանց գործունեության ոլորտներն ու պարտականությունները,

ժ) իր բացակայության ժամանակ համալսարանի ռեկտորի պարտականությունների կատարումը դնում է պրոռեկտորներից մեկի վրա,

ժա) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ,

ժբ) իր հրամանով ձևավորում է կառուցվածքային ստորաբաժանումներ՝ համաձայնեցնելով գիտական խորհրդի հետ:

2. Սույն ընթացակարգը սահմանում է Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդների առաջադրման, ընտրությունների անցկացման, ռեկտորի նշանակման և նրա հետ աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:

3.Համալսարանի ռեկտորի ընտրությունների ընթացակարգը, Համալսարանի կանոնադրությանը համապատասխան, հաստատում է Հիմնադիրների խորհուրդը:

2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4. Համալսարանում ռեկտորի թափուր պաշտոն առաջանալու դեպքում Հիմնադիրների խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ:

5. Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

5.1.1. ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում, իսկ Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման թեկնածուի առաջադրման մասին որոշումը և հավակնորդի՝ առաջադրվելու գրավոր համաձայնությունը,

5.1.2. լուսանկար,
5.1.3. քաղվածք աշխատանքային գրքույկից,
5.1.4. ինքնակենսագրություն,
5.1.5. բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, դոկտորի գիտական աստիճանը և պրոֆեսորի գիտական կոչումը հավաստող վկայականների պատճեններ, արտասահմանյան բուհերում դոկտորի աստիճան ու պրոֆեսորի կոչում ունենալու մասին վկայականը,
5.1.6. կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
5.1.7. տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,
5.1.8. հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ,
5.1.9. հավակնորդի գործունեության ընդլայնված ծրագիր՝ փակ և կնքված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:
6. Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի հանձնումն ավարտվում է ընտրության անցկացումից 10 օր առաջ:
7. Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (համարակալած և յուրաքանչյուր էջի հետնամասում ստորագրած) հանձնվում է Հիմնադիրների խորհրդի քարտուղարին՝ առձեռն կամ փոստով:
8. Հայտերն ընդունելիս Հիմնադիրների խորհրդի քարտուղարը պարտավոր է ստուգել հայտի համապատասխանությունը սույն ընթացակարգի ներկայացվող պահանջներին:
9. Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը տեղեկացվում է այդ մասին նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ 1 օրվա ընթացքում պատվիրված նամակով՝ հանձնման մասին հետադարձ ծանուցմամբ, հնարավորության դեպքում՝ նաև հեռախոսազանգով կամ էլեկտրոնային փոստով: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում: Հայտերի ընդունման ավարտի հաջորդ օրը Հիմնադիրների խորհրդի քարտուղարը կից գրությամբ ընդունված փաստաթղթերի փաթեթը հանձնում է Հիմնադիրների խորհրդի նախագահին:
10. Հիմնադիրների խորհրդի նախագահը մրցույթի անցկացումից առնվազն 1 շաբաթ առաջ
10.1. խորհրդի անդամներին է ուղարկում յուրաքանչյուր հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի պատճենները,
10.2. կազմակերպում է հավակնորդների անվան և ազգանվան, գիտական աստիճանի և կոչման, զբաղեցրած պաշտոնի, ինչպես նաև առաջադրման եղանակի վերաբերյալ տեղեկատվության տարածում Համալսարանում,
10.3. կազմակերպում է փաստաթղթերի պատճենների առկայությունը Համալսարանի գրադարանում:

2. ՌԵԿՏՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

11. Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի թեկնածուներն առաջադրվում են համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կամ Հիմնադիրների խորհրդի կողմից կամ էլ ինքնաառաջադրմամբ:
12. Համալսարանի ռեկտոր կարող է առաջադրվել առնվազն 3 տարվա ղեկավար աշխատանքի փորձ, դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտության թեկնածու և դրան համարժեք գիտական աստիճան (փիէջդի, դոկտոր) այն անձը, որը ընդգրկված է հիմնադիրների կազմում:

3. ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ՝ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ

13. Հիմնադիրների խորհրդի՝ ռեկտորի ընտրության նիստը նախապատրաստում և ղեկավարում է Հիմնադիրների խորհրդի նախագահը: Համալսարանի ռեկտորի ընտրության նիստը դռնփակ է, մասնակցում են միայն հիմնադիրները:
14. Նիստի օրակարգը հետևյալն է.
14.1 հավակնորդների՝ սույն ընթացակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,
14.2. թեկնածուների ծրագրերի ներկայացում,
14.3. հավակնորդներին հարցերի ներկայացում և խորհրդի անդամների ելույթներ,

14.4. հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,

14.5. ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն,

14.6. ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

15. Հիմնադիրների խորհրդի մրցութային նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

16. Նիստում Հիմնադիրների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

17. Հիմնադիրների խորհրդի նիստին ռեկտորի պաշտոնի հավակնորդի ներկայությունը պարտադիր է, սակայն նրա բացակայությունը հիմք չէ նրա թեկնածությունը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար, բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

18. Օրակարգի առաջին հարցով խորհրդի քարտուղարը զեկուցում է ռեկտորի թեկնածուների՝ սույն ընթացակարգի պահանջներին բավարարելու հարցը: Հարցի ներկայացումից հետո զեկուցողը պատասխանում է առաջացած հարցերին: Խորհրդի ցանկացած անդամ կարող է առաջարկ ներկայացնել անձին թեկնածուների ցուցակից հանելու վերաբերյալ՝ հիմնավորելով, թե սույն ընթացակարգի ո՛ր պահանջներն են խախտված: Հավակնորդին ցուցակից հանելու առաջարկը խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության: Հավակնորդը հանվում է ցուցակից, եթե առաջարկին կողմ է քվեարկել նիստին ներկա անդամների առնվազն երկու երրորդը:

19. Օրակարգի երկրորդ հարցով խորհրդի նախագահը ծրագրային ելույթների համար, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայնը տալիս է հավակնորդներին: Յուրաքանչյուր հավակնորդ ունի ոչ ավելի, քան 10 րոպե տևողությամբ ելույթի իրավունք: Յուրաքանչյուր հավակնորդի ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարում է հարցերի առաջին հերթագրում, որից հետո խորհրդի հերթագրված անդամները, ըստ հերթագրման հերթականության, ստանում են թեկնածուին հարց տալու հնարավորություն: Հարցի և պատասխանի տևողությունը պետք է հակիրճ լինի: Թեկնածուին տրվող հարցերը կարող են վերաբերել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին կամ ծրագրային ելույթին: Հարցերը և պատասխանները արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից:

20. Առաջին հերթագրման արդյունքում տրված հարցերին թեկնածուի պատասխանելուց հետո խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, հայտարարում է հարցերի երկրորդ հերթագրում՝ սույն ընթացակարգի «4.7» կետով նախատեսված կարգով:

21. Բոլոր թեկնածուներին ուղղված հարցերի և նրանց պատասխանների ավարտից հետո սկսվում է քննարկում: Խորհրդի անդամների ելույթները կարող են դադարեցվել խորհրդի որոշմամբ: Ելույթ ունեցողներին հարցեր չեն տրվում:

4. ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

22. Նիստում քննարկումներից հետո խորհրդի նախագահը, ըստ ազգանունների այբբենական կարգի, հրապարակում է հավակնորդների ազգանուն-անունները: Եթե վերջիններս իրենց անունը հրապարակելու պահին ինքնաբացարկ չեն հայտնում, ապա նրանց թեկնածությունը ներառվում է քվեաթերթիկում:

23. Խորհրդի նախագահը ներկայացնում է գաղտնի քվեարկության կարգը:

24. Խորհուրդն իր կազմից ընտրում է 3 անդամներից կազմված հաշվիչ հանձնաժողով:

25. Հանձնաժողովը

25.1. կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը,

25.2. կազմում է Համալսարանի ռեկտորի ընտրության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը (երկու օրինակից),

25.3. հրապարակում է Համալսարանի ռեկտորի ընտրության քվեարկության արդյունքները:

26. Հանձնաժողովի անդամների թեկնածություններն առաջադրում են խորհրդի անդամները: Հավակնորդ հանդիսացող խորհրդի անդամները չեն կարող առաջադրվել և առաջադրել հաշվիչ հանձնաժողովի անդամության թեկնածուներ: Յուրաքանչյուր անդամի առաջադրումից հետո կազմակերպվում է քվեարկություն: Առաջադրումներն ու քվեարկությունները շարունակվում են մինչև հանձնաժողովի կազմի համալրումը:

27. Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

28. Ռեկտորի ընտրությունների քվեաթերթիկները ստորագրվում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

29. Ռեկտորի ընտրությունների քվեաթերթիկում նշվում են թեկնածուների ազգանուն-անունները՝ այբբենական կարգով: Յուրաքանչյուր թեկնածուի անվան դիմաց առկա է «կողմ եմ» գրառումով վանդակը: Քվեաթերթիկը պետք է պարունակի նաև «բոլորին դեմ եմ» գրառումով վանդակ: Մեկ թեկնածուի քվեարկման դեպքում նրա անվան դիմաց առկա են «կողմ եմ» և «դեմ եմ» գրառումներով վանդակներ:

30. Հիմնադիրների խորհրդի անդամը հաշվիչ հանձնաժողովից քվեաթերթիկ ստանալիս ցուցակում ստորագրում է իր անվան դիմաց:

31. Հիմնադիրների խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

32. Ընտրողը քվեաթերթիկում համապատասխան նշում է կատարում իր նախընտրած թեկնածուի անվան դիմաց «կողմ» գրառմամբ վանդակում՝ հետևյալ կերպ «V»: Եթե նա դեմ է բոլոր թեկնածուներին, ապա նշում է կատարում «բոլորին դեմ եմ» գրառմամբ վանդակում: Մեկ թեկնածուի քվեարկման դեպքում ընտրողը նշում է կատարում «կողմ եմ» կամ «դեմ եմ» գրառումներով վանդակներից միայն մեկում:

33. Քվեարկության ավարտից հետո հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում է մեկական քվեաթերթիկ, հայտարարում է քվեարկության արդյունքը և փոխանցում է հանձնաժողովի անդամներին տեսակավորելու համար: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը կարող է պահանջել քվեարկության դնելու քվեաթերթիկի անվավեր լինելու հարցը:

34. Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե չի համապատասխանում սույն ընթացակարգի «5.11» կետի պահանջներին կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում: Քվեաթերթիկի անվավերության վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի որոշումը ընդունվում է հաշվիչ հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

35. Հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:

36.Արձանագրության մեջ գրառվում է

36.1. քվեաթերթիկ ստացածների թիվը (ըստ ցուցակի ստորագրությունների),

36.2. քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

36.3. անվավեր քվեաթերթիկների թիվը,

36.4. թեկնածուի (ների) ազգանունը (ները) և յուրաքանչյուրի ստացած ձայները,

36.5. «բոլորին դեմ» (մեկից ավելի թեկնածուների դեպքում) տրված ձայները:

37. Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած «կողմ»-ձայների քանակի նվազման հաջորդականության:

38. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները խորհրդի նիստում: Քվեարկության ընթացքի կամ քվեաթերթիկների հաշվման ընթացքի վերաբերյալ հանձնաժողովի՝ առարկություն ունեցող անդամը քվեարկության արդյունքները ներկայացնելուց հետո կարող է Հիմնադիրների խորհրդին ներկայացնել նախօրոք գրավոր շարադրած հատուկ կարծիք: Խորհուրդը բաց քվեարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտում ներկայացված բոլոր հատուկ կարծիքների վերաբերյալ:

39. Քվեարկության արդյունքների հիման վրա Համալսարանի խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

39.1. Համալսարանի ռեկտոր ընտրվելու մասին,

39.2. քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին,

39.3. ընտրությունն անվավեր ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին,

39.4. ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

40. Համալսարանի ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:

41.Առաջին փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները համարվում են չկայացած, իսկ ռեկտորը՝ չընտրված, եթե քվեարկված միակ թեկնածուն չի ստացել

ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ, կամ եթե քվեարկվել են երկու և ավելի թեկնածուներ, և նրանք միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:

42. Քվեարկության երկրորդ փուլն անցկացվում է, եթե քվեարկվել են երկու կամ ավելի թեկնածուներ, և նրանցից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Այս դեպքում երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, եթե նրանք միասին հավաքել են խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները: Եթե առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ, ապա երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երեք, իսկ երրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

43.Երկրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

43.1. Համալսարանի ռեկտոր ընտրվելու մասին,

43.2. քվեարկության երրորդ փուլ անցկացնելու մասին,

43.3 ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

44. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները ճանաչվում են չկայացած, իսկ ռեկտորը համարվում է չընտրված, եթե քվեարկված թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:

45. Քվեարկության երրորդ փուլն անցկացվում է, եթե քվեարկության երկրորդ փուլի արդյունքում թեկնածուներից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Երրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

46. Երրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

46.1. Համալսարանի ռեկտոր ընտրվելու մասին,

46.2. ընտրությունները չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

47. Երրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները ճանաչվում են չկայացած, իսկ ռեկտորը՝ համարվում չընտրված, եթե որևէ թեկնածու չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ:

48. Ռեկտորի ընտրության արդյունքը ձևակերպվում է խորհրդի որոշման տեսքով: Որոշումը ստորագրում է խորհրդի նախագահը:

49. Ռեկտորի ընտրական գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը խորհրդի նիստի արձանագրության հետ միասին պահվում են Համալսարանում:

50. Ընտրությունների ընթացակարգի խախտումները և ընտրությունների արդյունքները կարող են բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

51. Ընտրությունները խորհրդի կողմից ճանաչվում են անվավեր, եթե ընթանում են ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության, սույն ընթացակարգի էական խախտումներով: Եթե խախտումները տեղի են ունեցել մինչև Հիմնադիրների խորհրդի մրցութային նիստը, ապա ընտրություններն անվավեր ճանաչելու դեպքում համալսարանի խորհուրդը հայտարարում է նոր մրցույթ: Եթե խախտումները տեղի են ունեցել Հիմնադիրների խորհրդի մրցութային նիստում կամ քվեարկության փուլում, ապա ընտրություններն անվավեր ճանաչելու դեպքում Համալսարանի խորհուրդը հայտարարում է նոր քվեարկություն:

52. Համալսարանի ռեկտոր ընտրվելու մասին Հիմնադիրների խորհուրդը կայացնում է որոշում: